ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Քրիստինե Վալերիկի Նիկողոսյանի «Բուհ-ձեռնարկություն գործընկերության հեռանկարները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Քրիստինե Նիկողոսյանի «Բուհ-ձեռնարկություն գործընկերության հեռանկարները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման, մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործման, բարձրագույն կրթության որակի բարձրացման և ազգային նորարարական համակարգի կայացման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող հիմնախնդրի ուսումնասիրությանը:

Ժամանակակից գիտելիքահենք տնտեսության պայմաններում բարձրագույն ուսումնական հաստատությունն այլևս չի կարող սահմանափակվել միայն կրթական ծառայությունների մատուցմամբ և գիտական արդյունքի ստեղծմամբ: Բուհի մրցունակությունը գնալով ավելի մեծ չափով պայմանավորվում է նրա՝ տնտեսության իրական հատվածի, պետական կառավարման համակարգի և հասարակության այլ դերակատարների հետ արդյունավետ փոխգործակցելու կարողությամբ: Նույն կերպ, ձեռնարկությունների մրցունակությունն ավելի ու ավելի է պայմանավորվում գիտելիքի, հետազոտությունների, նորարարական տեխնոլոգիաների և որակյալ մարդկային կապիտալի հասանելիությամբ:

Այս առումով բուհ-ձեռնարկություն գործընկերությունը հանդես է գալիս ոչ միայն որպես կրթության և աշխատաշուկայի կապի ապահովման կառուցակարգ, այլև որպես գիտելիքի ստեղծման, փոխանցման և առևտրայնացման, տեխնոլոգիական նորարարության, ձեռնարկատիրության և տնտեսական աճի կարևոր ինստիտուցիոնալ հարթակ:

Թեմայի արդիականությունը հատկապես ընդգծվում է Հայաստանի պայմաններում, որտեղ բարձրագույն կրթության համակարգն ունի նշանակալի մարդկային և գիտական ներուժ, սակայն գիտելիքի ստեղծման և դրա տնտեսական կիրառության միջև առկա կապերը դեռևս բավարար չափով զարգացած և ինստիտուցիոնալացված չեն:

Հետևաբար, ՀՀ-ում բուհ-ձեռնարկություն գործընկերության ներկա վիճակի, դրա սահմանափակումների և զարգացման հնարավորությունների համակարգային ուսումնասիրությունն ունի ոչ միայն ակադեմիական, այլև պետական քաղաքականության և տնտեսական զարգացման անմիջական նշանակություն: Այս տեսանկյունից ատենախոսության թեմայի ընտրությունը հիմնավորված է և արդիական:

Ատենախոսության նպատակի և խնդիրների գնահատականը

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ-ում բուհ-ձեռնարկություն գործընկերության ներկա վիճակի և զարգացման ներուժի բացահայտումն է, դրա ինստիտուցիոնալ և կազմակերպակառուցվածքային առանձնահատկությունների վերլուծությունը, ինչպես նաև համագործակցության գնահատման և մշտադիտարկման

մեթոդաբանական շրջանակի մշակումը: Նպատակին համապատասխան հեղինակը առաջադրել է տեսական, մեթոդաբանական և կիրառական բնույթի խնդիրներ:

Դրանց թվում առանձնակի նշանակություն ունեն՝

- բուհ-ձեռնարկություն գործընկերության տեսական մոտեցումների համակարգումը,
- համագործակցության հիմնական կապուղիների դասակարգումը,
- միջազգային փորձի ուսումնասիրությունը,
- ՀՀ-ում առկա իրավիճակի բազմաշահակցային գնահատումը,
- համագործակցության խոչընդոտների բացահայտումը,
- համագործակցության ինտենսիվության էկոնոմետրիկ գնահատումը,
- գործընկերության մշտադիտարկման գործիքների մշակումը:

Առաջադրված խնդիրներն ընդհանուր առմամբ համահունչ են հետազոտության նպատակին և ապահովում են աշխատանքի կառուցվածքային ամբողջականությունը:

Միաժամանակ, նպատակահարմար կլիներ նպատակի ձևակերպման մեջ ավելի հստակ տարանջատել *գործընկերության զարգացման «հեռանկարների» բացահայտումը և գործընկերության գնահատման մեթոդաբանության մշակումը,* քանի որ դրանք, ըստ էության, երկու փոխկապակցված, բայց մեթոդաբանորեն տարբեր հետազոտական ուղղություններ են:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (193 աղբյուր) և հավելվածներից: Աշխատանքի կառուցվածքը տրամաբանական է, իսկ գլուխների հաջորդականությունը նպաստում է հետազոտական խնդիրների ամբողջական բացահայտմանը:

Աշխատանքի ներածական մասում ատենախոսն անդրադարձել է թեմայի արդիականությանը, սահմանել է հետազոտության նպատակը և ձևակերպել խնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացրել է հետազոտության մեթոդաբանությունը և պաշտպանության ներկայացվող նորույթը: Ատենախոսության կառուցվածքը համահունչ է հետազոտության նպատակից բխող խնդիրներին:

Տեսական և հայեցակարգային ներդրման գնահատականը

Ատենախոսության տեսական հիմքը բավական ընդգրկուն է: Աշխատանքի առավել հետաքրքիր տեսական դրույթներից մեկն այն է, որ հեղինակը խնդրահարույց է համարում ավանդական Helix մոդելներում ուսանողի և շրջանավարտի դիրքավորումը: Ըստ հեղինակի՝ ուսանողը չպետք է դիտարկվի միայն որպես կրթական համակարգի վերջնական արդյունք, այլ պետք է ճանաչվի որպես գիտելիքի, հմտությունների և նորարարության փոխանցման ակտիվ դերակատար:

Այս դրույթի հիման վրա առաջարկվում է *University–Industry–Government–Student/Graduate (UIGS)* մոդելը:

Առաջարկությունն ունի տեսական հետաքրքրություն, քանի որ այն ուշադրության կենտրոն է բերում մարդկային կապիտալի կրողին՝ ուսանողին և շրջանավարտին: Սակայն հենց այստեղ է առաջանում ատենախոսության առաջին էական տեսական հարցադրումը:

Triple, Quadruple և Quintuple Helix մոտեցումների զարգացումը վերջին տասնամյակներում արդեն իսկ հանգեցրել է գիտելիքի էկոհամակարգի բազմաթիվ դերակատարների վերաիմաստավորմանը: Հետևաբար, UIGS մոդելի *գիտական նորությունը պետք է հիմնավորվի ոչ միայն այն հանգամանքով, որ ուսանողը/շրջանավարտը առանձնացվում է որպես առանձին հանգույց,* այլև այն բանով, որ այդ հանգույցի ներմուծումը փոխում է համակարգի պատճառահետևանքային կամ գործառական տրամաբանությունը: Այլ կերպ ասած՝ կարևոր է պատասխանել հարցին՝ UIGS-ը պարզապես գործող Helix մոդելների ընդլայնված անվանումն է, թե՞ այն առաջարկում է համագործակցության գործընթացի մեկնաբանման սկզբունքորեն նոր կառուցակարգ:

Ատենախոսության ներկայացված նյութը որոշակիորեն հիմնավորում է երկրորդ մոտեցումը, հատկապես զբաղվածության, ձեռներեցության և գիտելիքի փոխանցման համատեքստում, սակայն այդ տարբերակումը կարելի էր ձևակերպել տեսականորեն ավելի ճշգրիտ:

Այդուհանդերձ, որպես կիրառական-տեսական մոդել՝ UIGS շրջանակը կարող է դիտարկվել որպես աշխատանքի կարևոր արդյունք:

Համագործակցության կապուղիների հիերարխիկ շրջանակի գնահատականը

Ատենախոսության մեկ այլ նշանակալի արդյունք է բուհ-ձեռնարկություն համագործակցության կապուղիների հինգ մակարդակով հիերարխիկ դասակարգումը: Հեղինակը համագործակցության ձևերը դասակարգում է հետևյալ կերպ.

- ցանցային կապեր և հաղորդակցություն,
- շարունակական կրթություն և ուսուցում,
- մասնագիտական պատրաստում և զբաղվածություն,
- հետազոտություն և գիտության զարգացում,
- բիզնես և մտավոր սեփականության իրավունքներ:

Այս մոտեցման առավելությունն այն է, որ համագործակցությունը ներկայացվում է որպես որոշակի զարգացման և հասունացման գործընթաց:

Այնուամենայնիվ, այստեղ առկա է մեթոդաբանական որոշակի խնդիր: Գործնականում համագործակցության նշված մակարդակները միշտ չէ, որ ունեն գծային հաջորդականություն: Օրինակ՝ բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունը կարող է անմիջապես անցնել բուհի հետ համատեղ R&D նախագծի՝ առանց շարունակական կրթության կամ երկարատև ցանցային համագործակցության փուլերի: Հետևաբար, հիերարխիան ավելի ճիշտ է մեկնաբանել ոչ թե որպես պարտադիր զարգացման հաջորդականություն, այլ որպես *համագործակցության ինստիտուցիոնալ բարդության և խորության աճի շրջանակ:*

Եթե հեղինակը հիերարխիան մեկնաբանում է հենց այդ իմաստով, ապա առաջարկվող մեթոդաբանական մոտեցումը դառնում է ավելի համոզիչ:

KPI-ների համակարգի գնահատականը

Աշխատանքի բավական հավակնոտ արդյունք է 68 առանցքային կատարողական ցուցանիշների մշակումը: Առաջարկվող KPI-ները բաժանված են արդյունքային, արդյունավետության և որակի ցուցանիշների: Այս մոտեցման կարևոր առավելությունն այն

է, որ համալսարան-ձեռնարկություն համագործակցությունը հնարավոր է դառնում գնահատել ոչ միայն համագործակցության փաստով, այլև դրա արդյունքներով:

Այնուամենայնիվ, 68 ցուցանիշի կիրառումը առաջացնում է երկու կարևոր մեթոդաբանական հարց:

Առաջին՝ բոլոր ցուցանիշների չափման հնարավորությունը և տվյալների հասանելիությունը ՀՀ բուհերում նույնը չէ:

Երկրորդ՝ ցուցանիշների մեծ քանակը կարող է հանգեցնել չափման գործընթացի վարչական ծանրաբեռնվածությանը (measurement burden):

Հետևաբար, գործնական կիրառելիության տեսանկյունից՝ նպատակահարմար կլիներ առաջարկել ցուցանիշների երկու շրջանակ.

- KPI-ների հիմնական (նվազագույն) շրջանակ,
- KPI-ների ընդլայնված շրջանակ:

Այսպիսի տարբերակումը UIGS համակարգը կդարձներ ավելի կիրառելի պետական մոնիթորինգի և բուհերի ներքին կառավարման համար:

UIGS համաթվի մեթոդաբանական գնահատականը

Աշխատանքում առաջարկվում է UIGS ամփոփ համաթիվը հաշվարկել հինգ մակարդակների գնահատականների պարզ թվաբանական միջինով: Մոտեցման հիմնական առավելությունը պարզությունն ու թափանցիկությունն է: Սակայն այստեղ ակնհայտ է որոշակի մեթոդաբանական սահմանափակման առկայությունը:

Պարզ միջինը ենթադրում է, որ համագործակցության բոլոր հինգ մակարդակներն ունեն նույն նշանակությունը և փոխադարձաբար փոխարինելի են:

Օրինակ՝ ցանցային միջոցառումների բարձր ակտիվությունը կարող է բարձրացնել ընդհանուր համաթիվը, մինչդեռ իրական տեխնոլոգիական փոխանցման կամ համատեղ R&D-ի մակարդակը կարող է մնալ ցածր:

Հետևաբար, հետագա հետազոտություններում կարելի է դիտարկել կշռված համաթվի կիրառումը, որի դեպքում մակարդակների կշիռները կարող են որոշվել փորձագիտական գնահատման, վիճակագրական մեթոդների կամ տվյալների էմպիրիկ նշանակության հիման վրա: Միաժամանակ պետք է նկատել, որ հեղինակային առաջարկած պարզ միջինով հաշվարկը որպես *սկզբնական և համադրելի մոնիթորինգի գործիք* լիովին հասկանալի է:

PII համաթվի և էկոնոմետրիկ մոդելի գնահատականը

Ատենախոսության առավել հետաքրքիր էմպիրիկ արդյունքներից է Գործընկերության ինտենսիվության համաթվի (PII) մշակումը և դրա վրա օրդինալ լոգիստիկ ռեգրեսիայի կիրառումը: Վերջնական մոդելում պահպանվել են երկու հիմնական փոփոխականներ՝ համագործակցության կապուղիները (CC) և խոչընդոտները (BAR):

Հեղինակի մեկնաբանությամբ՝ համագործակցության կապուղիների յուրաքանչյուր լրացուցիչ միավոր մոտ 19 տոկոսով բարձրացնում է ավելի ինտենսիվ գործընկերության հասնելու հավանականությունը, իսկ խոչընդոտների աճը նվազեցնում է այդ հավանականությունը: Սա ատենախոսության կարևոր արդյունքն է, քանի որ փորձ է արվել համագործակցության մասին նկարագրական դատողություններից անցում կատարել վիճակագրորեն ստուգելի պատճառաբանական կամ առնվազն ասոցիատիվ կապերի

բացահայտմանը: Այստեղ, սակայն, անհրաժեշտ է կատարել կարևոր մեթոդաբանական տարբերակում:

Օրդինալ լոգիստիկ ռեգրեսիայի արդյունքները ցույց են տալիս *միճակագրական կապ*, սակայն ինքնին չեն ապացուցում պատճառահետևանքային հարաբերությունը: Հետևաբար, *«կապուղիների ավելացումը բարձրացնում է գործընկերության ինտենսիվությունը»* ձևակերպումը ավելի ճիշտ կլինի ներկայացնել որպես *«կապուղիների բազմազանությունն ու ակտիվությունը միճակագրորեն դրական կապված են գործընկերության ինտենսիվության հետ»:* Բացի դրանից, ընտրանքի՝ 113 դիտարկման պայմաններում մոդելի կայունությունը ցանկալի կլիներ լրացուցիչ ստուգել այլընտրանքային սպեցիֆիկացիաներով և robustness checks-ով: Այդուհանդերձ, էկոնոմետրիկ մոտեցման կիրառումն էականորեն բարձրացնում է աշխատանքի վերլուծական մակարդակը:

Էմպիրիկ հետազոտության արդյունքների գնահատականը

Ատենախոսության արժանիքներից է բազմաշահակցային էմպիրիկ հետազոտության իրականացումը: Բուհերի ներկայացուցիչների, ուսանողների և շրջանավարտների, ինչպես նաև ձեռնարկությունների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել բացահայտելու նույն խնդրի նկատմամբ տարբեր դերակատարների ընկալումների տարբերությունները: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ բուհերի և ձեռնարկությունների պատասխանների համադրումը ցույց է տալիս համագործակցության կառուցվածքային անհամապատասխանություն:

Բուհերը հիմնականում համագործակցությունը կապում են մասնագիտական զարգացման, փորձառության կազմակերպման, վերապատրաստման և հեղինակության հետ, մինչդեռ ձեռնարկությունների համար հիմնական շարժառիթը տաղանդների և աշխատուժի ներգրավումն է: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ կողմերի միջև առկա է ոչ միայն համագործակցության պակաս, այլև *համագործակցության արժեքի տարբեր ընկալում:* Ավելին, ձեռնարկությունների կողմից նորարարությունների գերակշիռ մասը ինքնուրույն իրականացնելու հանգամանքը և բուհերի՝ որպես նորարարության աղբյուրի գրեթե չարտահայտված դերը բավական լուրջ ազդակ է Հայաստանի բարձրագույն կրթության և գիտության ոլորտի քաղաքականության համար: Այս արդյունքը, ըստ էության, ատենախոսության կարևոր էմպիրիկ եզրահանգումներից է:

Ուսանողի դերի վերաբերյալ եզրահանգումների գնահատականը

Ուսանողների շրջանում կատարված ուսումնասիրության արդյունքները հետաքրքիր են հատկապես այն պատճառով, որ բացահայտում են համալսարանական հաստատությունների առկայության և դրանց փաստացի օգտագործման միջև առկա տարբերությունը:

Կարիերայի կենտրոնների մասին իրազեկվածության և դրանց ծառայությունների օգտագործման ցուցանիշների տարբերությունը ցույց է տալիս, որ ինստիտուցիոնալ կառույցի առկայությունն ինքնին բավարար պայման չէ արդյունավետ համագործակցության համար: Այստեղ ատենախոսության UIGS մոդելի հիմնական գաղափարը ստանում է որոշակի էմպիրիկ հիմնավորում:

Միաժամանակ, «ուսանողները ներկայում արդյունավետ միջնորդ չեն» եզրահանգումը, թվում է, թե պետք է մեկնաբանել զգուշությամբ: Ուսանողի պասիվությունը կարող է

պայմանավորված լինել ոչ միայն ուսանողի վարքագծով, այլև բուհական կառույցների ծառայությունների որակով, դրանց հասանելիությամբ, տեղեկատվության տարածման ձևերով, խրախուսման համակարգերի բացակայությամբ և գործատուների կողմից առաջարկվող հնարավորությունների սահմանափակությամբ: Այսինքն՝ այստեղ տեղին է կիրառել ոչ թե «ուսանողը չի օգտագործում համակարգը» տրամաբանությունը, այլ *«համակարգը դեռևս չի ապահովել ուսանողի ակտիվ մասնակցության բավարար խթաններ»* մոտեցումը:

Ձեռնարկությունների հետազոտության արդյունքների գնահատականը

100 կազմակերպությունների շրջանում իրականացված ուսումնասիրությունը զգալիորեն հարստացնում է աշխատանքի էմպիրիկ հիմքը:

Հետաքրքրական է հատկապես այն արդյունքը, ըստ որի՝ կազմակերպությունների հետ բուհերի համագործակցությունը գերազանցապես կենտրոնացած է փորձառության կազմակերպման և աշխատուժի ներգրավման վրա:

Միաժամանակ, բուհերի հետ համատեղ հետազոտությունների և մշակումների, արտոնագրերի և տեխնոլոգիաների փոխանցման սահմանափակ մակարդակը վկայում է, որ համալսարան-ձեռնարկություն հարաբերությունները դեռևս գտնվում են համագործակցության համեմատաբար ցածր արժեքաստեղծ մակարդակում:

Հատկանշական է նաև ֆինանսական կարողության և ֆինանսական պատրաստակամության միջև հեղինակի կողմից արված տարբերակումը: Այս եզրահանգումը բավական հետաքրքիր է և կարող է օգտագործվել քաղաքականության մշակման համար: Եթե խնդիրը միայն ֆինանսական ռեսուրսի պակասը չէ, ապա պետական քաղաքականությունը չպետք է սահմանափակվի միայն ֆինանսական խթաններով: Անհրաժեշտ է բարձրացնել համալսարանական հետազոտությունների որակի, կիրառելիության և կանխատեսելի արդյունքի նկատմամբ վստահությունը: Այս առումով հեղինակային «ձեռնարկատիրական վաուչերների» առաջարկը տրամաբանորեն բխում է հետազոտության արդյունքներից:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքների ընդհանրացված գնահատականը

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները կարելի է խմբավորել չորս ուղղությամբ.

(1) *տեսական ուղղություն.* UIGS մոդելի առաջարկությունը, որով ուսանողը և շրջանավարտը դիտարկվում են որպես բուհ-ձեռնարկություն համագործակցության ակտիվ դերակատար:

(2) *մեթոդաբանական ուղղություն.* համագործակցության կապուղիների հիերարխիկ շրջանակի, 68 KPI-ների համակարգի և UIGS համաթվի մշակումը:

(3) *էմպիրիկ ուղղություն.* ՀՀ բուհերի, ուսանողների/շրջանավարտների և ձեռնարկությունների շրջանում բազմաշահակցային ուսումնասիրության իրականացումը:

(4) *կիրառական ուղղություն.* համագործակցության ինստիտուցիոնալացման, մոնիթորինգի և ձեռնարկությունների ֆինանսական ներգրավվածության խթանման առաջարկությունների մշակումը:

Այս չորս ուղղությունների համադրությունը աշխատանքին հաղորդում է ամբողջականություն:

Ատենախոսության գործնական նշանակությունը

Մշակված մոտեցումները կարող են կիրառվել՝

- բուհերի ռազմավարական պլանավորման,
- բուհ-ձեռնարկություն համագործակցության գնահատման,
- գիտելիքի փոխանցման և տեխնոլոգիաների առևտրայնացման քաղաքականության,
  ուսանողների զբաղվածության խթանման,
- ձեռնարկատիրական կրթության զարգացման,
- բուհերի տարեկան կատարողականի գնահատման,
- պետական կրթական և գիտական քաղաքականության մշտադիտարկման,
- բուհերի և ձեռնարկությունների համատեղ R&D ծրագրերի ձևավորման ոլորտներում:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն առաջարկությունը, ըստ որի բուհ-ձեռնարկություն համագործակցությունը կապվում է «Ակադեմիական քաղաքի» ձևավորման գործընթացի հետ: Եթե այդ առաջարկությունը համապատասխան ինստիտուցիոնալ ձևով իրականացվի, հնարավոր կլինի համալսարանական միջավայրում ձևավորել ոչ միայն կրթական, այլև կիրառական հետազոտությունների և ձեռնարկատիրական նախաձեռնությունների համար նպաստավոր էկոհամակարգ:

Դիտողություններ

Ատենախոսության վերաբերյալ դիտողությունները հիմնականում հանգում են հետևյալին.

1. University –Industry –Government –Student/Graduate (UIGS) մոդել.
   1.1. UIGS մոդելին առնչվող գիտական նորույթում կարելի այն ավելի հստակ սահմանազատել Quadruple և Quintuple Helix մոդելներից:
   1.2. UIGS համաթիվը, որպես պարզ թվաբանական միջին, հաշվի չի առնում տարբեր մակարդակներում հնարավոր անհավասար նշանակությունները:
   1.3. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը նշեր առաջարկվող UIGS համաթվի կիրառելիության վերապահումը. այն է՝ տվյալների ստանդարտացման, անկախ վավերացման և բուհերի միջև համադրելիության կառուցակարգերի առկայությունը:
2. Համագործակցության հիերարխիկ մակարդակները պետք է մեկնաբանվեն ոչ թե որպես պարտադիր գծային հաջորդականություն, այլ որպես համագործակցության խորության և ինստիտուցիոնալ հասունության մակարդակներ:
3. KPI-ների 68 ցուցանիշ ներառող համակարգը խնդրահարույց է գործնական առումով: Նպատակահարմար է կլիներ առանձնացնել հիմնական և ընդլայնված ցուցանիշների շրջանակները:
4. PII մոդելի արդյունքները պետք է մեկնաբանել որպես վիճակագրական, այլ ոչ միանշանակ պատճառահետևանքային կապեր:
5. Ընտրանք.

5.1.113 դիտարկումից բաղկացած էկոնոմետրիկ ընտրանքը սահմանափակում է արդյունքների ընդհանրացման հնարավորությունը:

5.2.ԵՊՀ և Վենետիկի Կա' Ֆոսկարի համալսարանի տվյալներիհամեմատության ժամանակ ցանկալի կլիներ հաշվի առնել ընտրանքներիկառուցվածքային տարբերությունները:

Նշված դիտողությունները հիմնականում միտված են հետագա բարելավումներին և չեն հակասում ատենախոսության հիմնական գիտական արդյունքներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողությունները, որոնք վերաբերում են հիմնականում առաջարկվող մոդելների հետագա տեսական հստակեցմանը, համաթվերի մեթոդաբանական կատարելագործմանը, ընտրանքի ընդլայնմանը և արդյունքների վավերացման խորացմանը, չեն նվազեցնում աշխատանքի ընդհանուր գիտական արժեքը:

Սեղմագիրը և հրապարակված աշխատանքները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսության արդյունքների հրապարակված լինելը մեկ մենագրության (համաղինակությամբ) և գիտական 6 հոդվածի տեսքով դրական է բնութագրում հեղինակի գիտական գործունեությունը: Առանձնակի կարևոր է, որ 2 հոդված հրապարակվել է միջազգային գիտաչափական շտեմարաններում ինդեքսավորվող հանդեսներում:

Ատենախոսության առանձին արդյունքների քննարկումը Երևանի պետական համալսարանում, Վենետիկի Կա'Ֆոսկարի համալսարանում և միջազգային գիտաժողովում վկայում է հետազոտության արդյունքների գիտական փորձարկման մասին:

Քրիստինե Նիկողոսյանի «Բուհ-ձեռնարկություն գործընկերության հեռանկարները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը արդիական, ինքնուրույն և բազմաշերտ գիտական հետազոտություն է:

Ընդհանուր առմամբ, Քրիստինե Վալերիկի Նիկողոսյանի «Բուհ-ձեռնարկություն գործընկերության հեռանկարները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունն ավարտուն և ինքնուրույն գիտական հետազոտություն է, որն իր գիտական նորույթով, տեսական և մեթոդաբանական հիմնավորվածությամբ, ստացված արդյունքների հավաստիությամբ և գործնական նշանակությամբ համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին: Հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
տնտեսագիտության դոկտոր, ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր
Գ. Ի. Վարդանյան

14 օգոստոսի, 2026 թ.

Պրոֆեսոր Գ. Ի. Վարդանյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական խորհրդի քարտուղար

Մ. Վ. Հովհաննիսյան